# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Վարդենիս** **28/06/2023**

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 25 անդամներ:

Բացակա էին` Արտակ Մանուկյանը, Արամ Մելքոնյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին`**

Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Աիարոն Խաչատրյանը

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար` Կամո Չարոյանը**

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Սոցիալական աջակցության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի դրույթներով՝ հիմք ընդունելով <<Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության>> բաժնի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի բյուջեի սոցիալական ծախսերից 4729 հոդվածից տրամադրել դրամական աջակցություն Վարդենիս համայնքի անապահով բնակիչներ՝

1.Անժելիկա Թարվերդյան /Կարճաղբյուր/20 000/ ՀՀ դրամ

2.Կամո Դանիելյան /Սոթք/ 20 000 / քսան հազար/ ՀՀ դրամ

3.Նիկոլա Պետրոսյան /Ակունք/ 20 000/ ՀՀ դրամ

4.Արմեն Պողոսյան /Վարդենիս/ 40 000/ քառասուն հազար/ ՀՀ դրամ

5.Մելիք Նիկողոսյան /Ակունք/ 30 000/ երեսուն հազար/ ՀՀ դրամ

6. Անուշ Հակոբյան /Վարդենիս/ 50 000/ հիսուն հազար/ ՀՀ դրամ

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի վերջին հարցը: Հարցի շուրջ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին

***ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 05-005-0010-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով
<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 ապրիլի 2021 թ.-ի N 698-Ն որոշմամբ սահմանված կարգով և
հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վարդենիս համայնքի ավագանին **որոշում է.**

1. Վարդենիս համայնքի 05-005-0010-0029 կադաստրային ծածկագրով 0,01411 հա անհայտ հողամասը և հողամասի վրա Վարդենիս քաղաքի բնակիչ Ատոմ Խաչիկի Սարգսյանի կողմից ինքնակամ կառուցված 74,3 քմ մակերեսով ավտոճանահարթակը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

Օրակարգի 12-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 49-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 7-րդ կետով և 24-րդ հոդվածի դրույթներով, 90-րդ հոդվածի 6-րդ կետով համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման յուրաքանչյուր ամսվա ընթացքում, իրենց պարտականությունների կատարման հետևանքով գոյացած ծախսերի համար, Վարդենիս համայնքի բյուջեից վճարել մինչև 75 000 ՀՀ դրամ:

2.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված դրամական փոխհատուցումը ավագանու անդամին տրամադրել.
1)Առանց ավագանու անդամների կողմից իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման:
2) Դրամական փոխհատուցումը ստանալու ցանկության վերաբերյալ ավագանու անդամի կամ խմբակցության դիմումի հիման վրա:
3) Անկանխիկ, յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 10-ը:

3. Ավագանու, իր պարտականությունների կատարման մասին հիմնավորումները և փոխհատուցման ծախսերը չվճարելու նախապայմանները:
1) Ավագանու անդամին տվյալ ամսում դրամական փոխհատուցում չի վճարվում եթե նա այդ ամսվա ընթացքում բացակայել է ավագանու և մշտական հանձնաժողովի բոլոր նիստերից, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ ամսում ավագանու և մշտական հանձնաժողովի նիստեր տեղի չի ունեցել:
2) Սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետում նշված բացակայությունները հիմնավորվում են՝ ավագանու մշտական հանձնաժողովների նախագահների արձանագրությունների և Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի կողմից արձանագրված նիստերին մասնակցած ավագանու անդամների գրանցման մասին տվյալները, որոնք ներկայացվում են Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին յուրաքանչյուր ամսվա համար մինչև հաջորդ ամսվա 5-ը:

Օրակարգի հաջորդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՂՄԱՆ և ԳԾԱՆՇՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետություն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի № ՔՂ/30.1/18332-2023 գրությունը և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը  համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Վարդենիս Համայնքի Վարդենիս քաղաքի երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների՝ ճանապարհային նշանների տարատեղման և գծանշման սխեման համաձայն կից հավելվածի:

Օրակարգի հաջորդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

***<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկությունը և ներկայացված ծրագիրը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող << Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումների>> (ՏԻԱԲ) ծրագիրը

2.Առաջարկի հաստատման դեպքում  համայնքի բյուջեից կատարել 20% ներդրում ՏԻԱԲ ծրագրի պահանջներին համապատասխան

3.Ծրագրի իրականացման դեպքում ձեռք բերված միջոցների շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում

4.Ձեռք բերված միջոցները չօգտագործել այլ նպատակներով, չօտարել կամ չսեփականաշնորհել ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Օրակարգի 9-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը: Հարցի շուրջ ելույթով հանդես եկավ <<Աիարոն Խաչատրյան>> խմբակցության անդամ Կարեն Մկրտչյանը, ով տվեց հստակ պարզաբանում ներկայացված հարցի վերաբերյալ: Հարցի շուրջ ելույթ ունեցավ նաև <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Եփրեմյան Մելանյան, ով նշեց որ ցանկալի է ծրագիրը արժանացնել հավանության, այս ծրագրի միջոցով <<Աստղավարդ>> ՀԿ հաճախող բնակչության տեղափոխումը իրականացնել ևս կլինի ավելի հասանելի, և բնակիչները կարողանալու են ստանալ համապատասխան ծառայությունը: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՊՐԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ՉԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ՁԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը համայնքի ավագանին որոշում է.

Վարդենիս համայնքի Ախպրածոր բնակավայրի բնակիչ Գևորգ Գասպարյանի գույքահարկի կուտակված 191 233 /մեկ հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ ապառքը օրենքով սահմանված կարգով զիջել 80 781 /ութսուն հազար յոթ հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ տույժը՝ մնացած պարտավորությունները մարելուց հետո:

Օրակարգի 8-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի շուրջ՝ նշելով որ դիմամատուն զոհված զինծառայող Գնել Գասպարյանի հայրն է: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ԳԵՎՈՐԳԻ ՍԵՎՈՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ՝ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 09.06.2005 թվականի N 947-Ն և 06.12.2018 թվականի N 1419-Ն որոշումներով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի բնակարանային պայմանների հանձնաժողովի 2023 թվականի մայիսի 19-ի ուսումնասիրության արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի բնակիչ, 2020 թվականի 44-օրյա պատերազմում զոհված Լևոն Մեխակի Սևոյանի հայր՝ Մեխակ Գևորգի Սևոյանին որպես բնակարանի կարիքավոր՝ վերցնել հաշվառման:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին
***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Հ. ԱՐԶՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ 16/1 ՀԱՍՑԵԻ 30ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 31/05/2023 թվականի թիվ 01.1//4041-2023 գրությունը համայնքի ավագանին որոշում է.

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող մարզ Գեղարքունիքի, համայնք Վարդենիս, Վարդենիս քաղաք Հ. Արզոյան փողոց 16/1 հասցեի 0,0030 հա հողամասի (սեփականության իրավունքի վկայական՝ 19052023-05-0043) (այսուհետ՝ գույք) նվիրատվությունը՝ Վարդենիս համայնքին:

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց

փաստաթղթեր և այն հանգամանքը, որ շինարարական աշխատանքները անհրաժեշտ է ավարտել մինչև աշուն. համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝

1. Կատարել մեկ անձից գնում Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրում նոր կառուցվող 4 բնակելի տների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը՝ տվեց պարզաբանում հարցի անհրաժեշտության վերաբերյալ: Հարցի քննարկման ընթացքում ավագանու նիստերի դահլիճ վերադարձան <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Շահնազարյանը և <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության անդամ Ռաֆայել Խչեյանը: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին
***ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/ԶԵԿ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի սեփականություն հանդիսացող կոմունալ ենթակառուցվածքները (սեփականության իրավունքի վկայական՝ թիվ 2295535 տրված 15.10.2010թ) նվիրել՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի երրորդ հարցը: Համայնքի ղեկավարը նշեց որ տվյալ հարցը բազմիցս քննարկվել է և՛ համայնքի ավագանիների հետ, և՛ բնակչության հետ, երկու անգամ հանրային լսում է իրականացվել, արդյունքում դրական եզրակացության են եկել: Հարցի շուրջ ելույթ ունեցավ <<Քաղաքացիական պայմանագիր>> խմբակցության ղեկավար Նաիրա Մանուչարյանը, ով ևս ներկա է եղել 27.06.2023 թ.-ին տեղի ունեցած հանրային լսմանը և ինքը ևս համամիտ է այն մտքի հետ, որ ճիշտ կլինի նվիրատվություն կատարել: Հարցի շուրջ այլ առաջարկություններ և առարկություններ չեղան: Հարցի քննարկման ընթացքում ավագանու նիստերի դահլիճից դուրս եկան <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Շահնազարյանը և <<Քաղաքացիական

պայմանագիր>> խմբակցության անդամ Ռաֆայել Խչեյանը: Քվեարկության արդյունքում 23 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-23 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին
***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ԱՊՐԻԼԻ 2023Թ.-Ի "ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Վարդենիս համայնքի ավագանու 2023թ. մայիսի 30-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 79-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ <<Վարդենիսի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-ում կատարել փոփոխություն՝ 45-րդ կետը հանել, 46-րդ կետում 0.5 միավոր բակապահը փոխարինել 1 միավորի, ինչպես նաև կատարել հաստիքի փոփոխություն՝ 39-րդ կետում 0.5 միավոր բանվորը կարդալ 0.25 միավոր, իսկ 40-րդ կետում 0.5 միավոր բանվորը կարդալ 0.75 միավոր բառերով:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի 2-րդ հարցը: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան: Հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 14 կողմ, 11 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-11

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

**/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2023թ.համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Նկատի ունենալով այն հանգամանքը ,որ ՀՀ կառավարությունը 2022թ օգոստոսի 11-ի նո 1313-Լորոշմամբ նախատեսել է Վարդենիս համայնքի հողօգտագործողներին աշնանացան ցորենի արտադրության խթանման համար որպես պետական աջակցություն տրամադրելու է 252 467.4 հազ/դրամ դրամ, թույլատրել համայնքի ղեկավարին 2023թ-ի բյուջեի եկամտային մասը, այլ ոչ հարկային եկամտատեսակում, ավելացնել նշված գումարը, իսկ ծախսային մասում այն ավելացնել 04,02,01 գործառնական դասակարգման/գյուղատնտեսություն/ 4729 տնտեսագիտական հոդվածին:

Ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը՝ ներկայացնելով օրակարգի առաջին հարցը: Հարցի պարզաբանման համար համայնքի ղեկավարը խոսքը տրամադրեց Ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանին: Հարցի շուրջ առարկություններ և առաջարկություններ չեղան: Հարցը դրվեց քվեարկության: Քվեարկության արդյունքում 25 կողմ, 0 ձեռնպահ, 0 դեմ հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ն/

Լսեցին

***ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

**/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 28-ի հերթական նիստի օրակարգը բաղկացած 9 հարցից՝

1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27 ԱՊՐԻԼԻ 2023Թ.-Ի ''ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 61-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ, ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Հ. ԱՐԶՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ 16/1 ՀԱՍՑԵԻ 30ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԵԽԱԿ ԳԵՎՈՐԳԻ ՍԵՎՈՅԱՆԻՆ ՈՐՊԵՍ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ՝ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՊՐԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԵՎՈՐԳ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9. <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ>> ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՏԱՐԱՏԵՂՄԱՆ ԵՒ ԳԾԱՆՇՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ 11-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 05-005-0010-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՀԱՅՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Մինչ նիստի բացված համարելը ելույթով հանդես եկավ <<Միասնական Վարդենիս >> խմբակցության ղեկավար Դավիթ Շահնազարյանը.**

**Հարգելի հայրենակիցներ ավելի քան վեց ամիս է, Արցախը գտնվում է շրջափակման մեջ, շուրջ 120.000 մեր հայրենակիցներ կանգնած են հումանիտար աղետի առաջ, ավելի քան 30.000 երեխաներ զրկված են իրենց մանկությունը վայելելու բերկրանքից: Ի հավելումն այս ամենի նաև առկա է ցեղասպանելու վտանգը: Այս գիշեր ադրբեջանական զինուժը հրետանային միջոցների և անօդաչուների կիրառմամբ կրակ է բացել Մարտակերտի և Մարտունու հայկական դիրքերի ուղղությամբ, ցավոք ունենք չորս զոհ: ,Միասնական Վարդենիսե դաշինքը իր վշտակցությունն ու զորակցությունն է հայտնում զոհվածների ընտանիքներին: Իսկ մենք խոսում ենք խաղաղության օրակարգից: Մենք հաճախ ենք համեմատվում և օրինակ բերում այլոց, հաճախ ենք հիշատակում և համեմատվում Իսրայել պետության հետ, մեզնից տարածքով փոքր պետություն, որ տարածաշրջանի առաջատարն է, բայց մոռանում ենք Իսրայել պետության կերտողների հանրահայտ ասույթները: Մեջբերեմ Իսրայելի 4-րդ վարչապետ Գոլդա Մեյերի հանրահայտ խոսքերը. ,Չի կարելի խոսել խաղաղության մասին նրանց հետ, ով զենքը ձեռքին եկել է սպանելու քեզե: Ոչ պակաս կարևոր են մեր մեծերի խոսքերը, մեջբերեմ Ավոյի խոսքերը. ,Եթե կորցնենք Արցախը, մենք կշրջենք հայոց պատմության վերջին էջըե: Հարգելի հայրենակիցնե՛ր, այլևս սահման է թե Վարդենիսը, և թե Երևանը: Ինչպես գիտեք, Հայ Յեղափոխական Դաշնակցության նախաձեռնությամբ ընդդիմությունը իրականացնում է 24-ժամյա ակցիա ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Եվրամիության դեսպանատների առջև, ընդդեմ երկակի ստանդարտների և ի աջակցություն Արցախի: ,Միասնական Վարդենիսե դաշինքը իր այս քայլով միանում է նշված ակցիային ի նպաստ Արցախի և ընդդեմ հակահայ ու երկակի ստանդարտների: ,Միասնական Վարդենիսե դաշինք:**

2023 թվականի հունիսի 28-ին ժամը 14:00-ին կայացավ Վարդենիս համայնքի ավագանու հերթական 7-րդ նիստը: Ավագանու 27 անդամներից նիստին ներկա էին 25-ը, բացակայում էին <<Քաղաքացիական պայմանագիր >> խմբակցության անդամներ Մելքոնյան Արամը և Մանուկյան Արտակը: Նիստը իրավազոր է: Նիստը վարում էր համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը: Նիստին մասնակցում էին համայնքի ղեկավարի օգնական Ալիկ Եղիազարյանը, համայնքի ղեկավարի տեղակալ Արամ Հարությունյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակն

Մկրտչյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Էդգար Պետրոսյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Սեյրան Գրիգորյանը, Քաղաքաշինության, հողօգտագործման և հողաշինության բաժնի պետ Աբգար Աբգարյանը, ինչպես նաև նիստին հրավիրված էր <<ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ>> ՓԲԸ ԱՐԵՎԵԼՔ ՏՏ Վարդենիս տեղամասի պետ Արման Արշակյանը: Նիստ վարողը՝ Ահարոն Խաչատրյանը հայտարարեց նիստը բացված և ներկայացրեց օրակարգում ընդգրկված հարցերը: Օրակարգը բաղկացած է 9 հարցից: Նիստ վարողը ներկայացրեց, որ օրակարգում ընդգրկված հարցերից բացի օրակարգում անհրաժեշտությունից ելնելով պետք է կատարել փոփոխություն և ավելացնել ևս չորս հարց, որը ներկայացնելը ավագանու նիստի քննարկմանը առաջացել է նախագծերը ավագանու անդամներին տրամադրելուց հետո: Օրակարգի շուրջ ելույթ ունեցավ <<Միասնական Վարդենիս>> խմբակցության ղեկավար Դավիթ Ծահնազարյանը՝նշելով որ հրատապություն ելնելով ընդառաջ գնանք օրակարգին առանց գլխադասային հանձնաժողովի քննարկման հարցերը ընդգրկենք օրակարգ, բայց արդեն հաջորդիվ կանոնակարգում կատարենք և այլևս լրացուցիչ հարց ավագանու օրակարգ չմտցնենք և շարժվենք ըստ ավագանու կողմից ձևավորված կանոնակարգի: Օրակարգում առաջարկված փոփոխությունների արդյունքում օրակարգում ընդգրկվեց 13 հարց: Օրակարգի հետ կապված այլ առաջարկություններ և առարկություններ չեղան, հարցը դրվեց քվեարկության, արդյունքում 25 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ՄԵԼԱՆՅԱ ԵՓՐԵՄՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽՉԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՋԵՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ___________________

*Նիստն արձանագրեց՝* Կամո Զարոյանը